ՏԵՂԵԿԱՆՔ

ՕՐԵՆՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԼՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 23. Մեկ անձից գնումներ կատարելու պայմանները

1. Գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե՝

1) գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ.

2) արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակից ելնելով, գնման այլ ձևերի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել.

3) պատվիրատուն, որևէ անձից կատարելով ապրանքների գնում, որոշում է սկզբնական պայմանագրում չներառված, սակայն օբյեկտիվորեն չնախատեսված հանգամանքներից ելնելով՝ սկզբնական պայմանագրի կատարման համար անհրաժեշտ դարձած ապրանքների լրացուցիչ գնում կատարելնույն անձից, պայմանով, որ՝

ա. լրացուցիչ ապրանքների պայմանագիրը հնարավոր չէ տեխնիկապես կամ տնտեսապես առանձնացնել սկզբնական պայմանագրից՝ առանց պատվիրատուի համար նշանակալի դժվարություն ստեղծելու, և

բ. դրա գինը չգերազանցի սկզբնական պայմանագրի ընդհանուր գնի 10 տոկոսը: Ընդ որում, միևնույն անձից սույն կետի կիրառմամբ լրացուցիչ գնում կարող է կատարվել մեկ անգամ, իսկ լրացուցիչ ապրանքների գինը չի կարող սահմանվել ավելի, քան նախատեսված է պայմանագրով.

4) գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը.

5) գնումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս:

«2. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի իմաստով արտակարգ իրավիճակի առաջացման հետևանքով գնման անհետաձգելի պահանջ է համարվում այն ապրանքների (ծառայությունների, աշխատանքների) գնման պահանջը, որն առաջացել է «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրավիճակների հ հայտ գալու արդյունքում, իսկ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով գնման անհետաձգելի պահանջ է համարվում այն ապրանքների (ծառայությունների, աշխատանքների) գնման պահանջը, որոնք պատվիրատուների՝ տվյալ տարվա պետական (համայնքային) բյուջեի ծախսային ծրագրերով նախատեսված չեն:»: